ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՐԿԱԴՅԱՅԻ

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ОВСЕПЯН АРМИНЕ АРКАДЯЕВНА

ЗАКОННОСТЬ ОСУЩЕСТВЛЕНИЯ ДИСКРЕЦИОННЫХ ПОЛНОМОЧИЙ В АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВЫХ ОТНОШЕНИЯХ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук
по специальности 12.00.02 - Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր
Աշոտ Սերյոժայի Հայրապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր
Աշոտ Հայկի Խաչատրյան
իրավաբանական գիտությունների թեկնածու
Սարգիս Վասյայի Մնացականյան

Առաջատար կազմակերպություն՝ **Եվրասիա միջազգային համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է **2026 թվականի փետրվարի 12-ին ժամը՝ 16:00-ին** Ռուս-Հայկական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Ռուս-Հայկական համալսարանի գրադարանում: Սեղմագիրն առաքվել է 2026 թվականի հունվարի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ. Հ. Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Европейском университете Армении

Научный руководитель: доктор юридических наук **Ашот Сережаевич Айрапетян**

Официальные оппоненты:

доктор юридических наук
Ашот Гайкович Хачатрян
кандидат юридических наук
Саргис Васильевич Мнацаканян

Ведущая организация: Евразийский международный университет

Защита состоится **12-ого февраля 2026 года в 16:00 часов** на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Российско-Армянского университета. Автореферат разослан 10-ого января 2026 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж. А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայեցողական լիազորությունների կիրառումը պետության և հասարակության համար ունի կարևոր դերակատարում, որի հիմնական նպատակն է վարչական մարմնին հնարավորություն տալ հայեցողական լիազորությունների կիրառմամբ լուծել օրենսդրությամբ չկարգավորված կամ մասամբ կարգավորված հարցը՝ ապահովելով մարդու սահմանադրական իրավունքների հարգումը և պաշտպանությունը:

Հայեցողական լիազորություններով պայմանավորված փոփոխությունները ձևավորվում են գլխավորպես հասարակական քաղաքական, սոցիալական, տնտեսական գործոնների ազդեցությամբ: Հայեցողական լիազորությունների կիրառման հարցերը կարգավորող իրավական նորմերի պատմական զարգացման, ինչպես նաև վարչարարությունում դրանց գործնական կիրառման ուսումնասիրությունը նպաստում է վարչական մարմիններում իրավակարգի ամրապնդման միջոցների հետագա կատարելագործմանը, վարչական օրենսդրության խնդիրների լուծմանը:

Իրավունքի տեսության մեջ առկա է այն տեսակետը, որ օրենքը ոչ միշտ է կարողանում ամբողջությամբ կարգավորել վարչական իրավունքում առկա բոլոր իրավահարաբերությունները, ուստի հայեցողական լիազորությունները դառնում են օբյեկտիվորեն անհրաժեշտ՝ վարչական մարմիններին իրավակիրառ ճկունություն հաղորդելու համար: Հայեցողական լիազորությունների կիրառումը ծագում է վարչական մարմնի առջև դրված նպատակի օբյեկտիվ և բարեխիղճ իրականացումից, ինչպես նաև գործնականում օգտակար որոշում ընդունելու անհրաժեշտությունից, իսկ վարչական մարմնի ինքնուրույնությունը գործում է հստակ որոշված սահմաններում և ցանկացած կողմնակի ազդեցություն խախտում է դրա հիմքերը, արժեզրկում տվյալ ինստիտուտի բովանդակային հատկանիշները:

Ատենախոսության թեման ունի ոչ միայն տեսական նշանակություն, այլև ձեռք է բերում գործնական կարևորություն՝ պայմանավորված արդի շրջանում էական վերակառուցման ենթարկվող վարչական իրավունքի համակարգով և դրա կատարման օրենսդրական չափորոշիչներով ու ընթացակարգերով: Գործնականում վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման հարցում առանձնահատուկ նշանակություն ունի հայեցողական լիազորությունների իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի միջև գոյություն ունեցող անխզելի փոխկապվածությունը, որը հետապնդում է միայն մեկ նպատակ՝ ջանքեր գործադրել այն ծառայեցնելու անձանց իրավունքների և ազատությունների ապահովմանը: Այդ փոխկապվածության պահպանումը հնարավոր է, երբ գործող իրավակարգավորումները համահունչ են իրավակիրառ պրակտիկային, իսկ վարչական մարմինը պատրաստակամ՝ դրանց ճիշտ մեկնաբանման և կիրառման հարցում:

Վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման անթույլատրելիությունն անվիճարկելի է եղել բոլոր ժամանակներում, սակայն ներկայումս այն առավել արդիական է դարձել՝ հաշվի առնելով իրավական և ժողովրդավարական պետության հիմքում դրված մարդու իրավունքների պահպանման արժևորումը: Ըստ այդմ, հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտումը երբևէ չի կարող համապատասխանել պետության

սահմանադրական նպատակներին, ժողովրդավարական և իրավական մեխանիզմներին: Մինչդեռ հայեցողական լիազորությունները կիրառելիս կարևորվում է վարչական մարմնի կողմից դրանց իրավաչափության պահպանումը, քանզի դրանք անմիջականորեն ազդում են անձի և քաղաքացու համար չափազանց կարևոր խնդիրների վրա՝ կապված վերջիններիս կենսապահովման հետ: Հաճախ հայեցողական լիազորությունների իրավաչափ կիրառման մերժումը կարող է հանգեցնել կոռուպցիոն դրսևորումների առաջացմանը՝ այդ կերպ նպաստելով կոռուպցիոն պրակտիկայի ձևավորմանը: Նման բացասական խնդիրների բացառման նպատակով վարչական մարմնի և նրա բոլոր աշխատակիցների գիտակցության ու գործելաոճի մեջ առաջնային կարող է լինել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության նկատմամբ հետևողականությունը, քանի որ կոռուպցիան պայմանավորված է ոչ միայն վարչական ընթացակարգերի կիրառմամբ, այլև վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների լայն շրջանակով:

Վարչական մարմինն օրենսդրի կողմից իրեն վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում անխուսափելիորեն բախվում է արգելքների (խոչընդոտների), որոնք իրենց ազդեցությունն են թողնում իրավաչափ վարչարարության ապահովման հարցում: Արգելքները վարչական մարմնի և ֆիզիկական ու իրավաբանական անձանց, ինչպես նաև վարչական մարմնի և այլ պետական մարմինների միջև հակասությունների և բախումների արդյունքն են:

Հայեցողական լիազորությունների կիրառմամբ առաջացած արգելքներն ու սահմանափակումները հանդիսանում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջոց, հետևաբար դրանց հնարավոր հաղթահարման միջոցներն էական նշանակություն ունեն վարչարարության արդյունավետ իրականացման հարցում:

Ատենախոսության թեմայի արդիականության վերաբերյալ հիմնավորումները պայմանավորված են տեսական և կիրառական նշանակություն ունեցող այնպիսի համակարգային և ինստիտուցիոնալ հիմնախնդիրների ուսումնասիրությամբ, որոնք կարող են նպաստել վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությանը, իրավաչափ վարչարարության արդյունավետությանը՝ ելնելով մարդու իրավունքների ու օրինական շահերի առաջնահերթությունից:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների կիրառման հիմնախնդիրների լուծումները՝ նշվածը պայմանավորելով դրանց կիրառման իրավաչափությամբ, սահմանների բնորոշմամբ և տարանջատմամբ՝ վեր հանելով նորմատիվ իրավական ակտերում և իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրները՝ ներկայացնելով հայեցողական լիազորությունների կիրառման վերաբերյալ վարչական մարմիններին ուղղորդող հայեցակարգեր, ընթացակարգեր և էլեկտրոնային ուղեցույցներ մշակելու անհրաժեշտությունը:

Հետազոտությունը լիարժեք և գործնական դարձնելու, ինչպես նաև առաջադրված նպատակին հասնելու համար ատենախոսությունում ներկայացվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել «հայեցողական լիազորություններ» հասկացությունը, ինչպես նաև տեսահիրավական վերլուծությունները,

- վեր հանել հայեցողական լիազորությունների զարգացման ուղիները միջազգային փորձի ուսումնասիրության համատեքստում,
- բացահայտել հայեցողական լիազորությունների իրականացման իրավական հիմքերի համալիր ուսումնասիրության արդյունքում այդ ինստիտուտի կիրառման անհրաժեշտությունը թելադրող գործոնների համակարգը,
- համեմատել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության և իրավունքի հիմնարար սկզբունքների հարաբերակցության հիմնախնդիրները,
- ի հայտ բերել հայեցողական լիազորությունների իրավակարգավորման առանձնահատկություններն իրավակիրառ պրակտիկայում,
- հետազոտել հայեցողական լիազորությունների իրավաչափության պահպանումը՝ որպես վարչական ակտի ընդունման միջոց,
- դիտարկել վարչական գործունեության սահմանափակման հիմնահարցերը՝ որպես հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության ամրագրում,
- վերլուծել հայեցողական լիազորությունները՝ որպես կոռուպցիոն ռիսկերի առաջացման գործոն,
- առաջադրել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման իրավական հետևանքները և նվազեցման հնարավոր միջոցները:

Առաջադրված խնդիրներն ուսումնասիրվել և առաջարկները վեր են հանվել օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում՝ վարչական մարմնի հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության արդյունավետությունը, օրենքով սահմանված կարգով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորություններից որևէ մեկի ընտրության անկախությունը ժողովրդավարական հասարակությունում դրա դերը կարևորելու նպատակով:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտ են հանդիսացել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության գիտական հայեցակարգային մոտեցումները և ընթացակարգերը վարչական իրավունքում, վարչական մարմինների կողմից կիրառվող հայեցողական լիազորությունները միջազգային փորձի ուսումնասիրման համատեքստում, հայեցողական լիազորությունները սահմանափակելու և իրավունքի հիմնարար սկզբունքների հարաբերակցությունը, հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների վերացման հնարավոր միջոցների մշակումը:

Հետազոտության առարկան են կազմում վարչական իրավունքում կիրառվող հայեցողական լիազորությունների իրավաչափության համատեքստում առկա հիմնախնդիրները և դրանց տեսահիրավական վերլուծությունը, ինչպես նաև հայեցողական լիազորությունների կիրառման արդիականացմանն ուղղված համարժեք լուծումները և գիտականորեն հիմնավորված առաջարկությունները:

Հետազոտության նորմատիվահիրավական հիմքերը: Հետազոտության նորմատիվ հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերը, միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված փաստաթղթերը, զեկույցներն ու նյութերը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը (2015 թվականների փոփոխություններով), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության և այլ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, ինչպես նաև Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումները:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության իրավական հիմքերը վարչական իրավունքում մշտապես գտնվել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական տեսաբանների և պետականագետների ուսումնասիրության կենտրոնում: Բազմակողմանի ուսումնասիրություններն ու առաջարկությունները, հիրավի, իրավական հիմք են ապահովել տարբեր երկրներում հայեցողական լիազորությունների կիրառման և նորացման գործում:

Վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների ուսումնասիրման և գիտական եզրահանգումների հարցում մեծ ներդրում ունեն հայ գիտնականներ՝ Գ. Դանիելյանը, Ա. Ղամբարյանը, Հ. Թովմասյանը, Ռ. Խանդանյանը,Գ. Կոստանյանը և այլոք: Վերջիններիս գիտական եզրահանգումներն ուսումանասիրվել և նկատի են առնվել աշխատանքում:

Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել նաև օտարերկրյա գիտնականների աշխատությունները, որոնց շարքում կարելի է առանձնացնել Վ. Կապիցինի, Ա. Դեմինի, Ա. Դորադոնի, Ռ. Վալիևի, Յ. Տիխամիրովի, Հ. Գրիբնաունի, Ժ. Ալդերի, Դ. Գալիգանի, Ա. Չիստովի, Հ. Վիտտոնի, Ֆ. Լառանի և այլոց աշխատությունները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտությունն իրականացվել է իրավահամեմատական, պատմահամեմատական, համակարգային դիտարկման և վերլուծության, գիտական ու գործնական դիտարկման մոտեցումների հավասարակշռման մեթոդներով: Նշված մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել հետազոտության օբյեկտը համակողմանի և ամբողջական հետազոտելու համար, մասնավորապես, վերլուծվել են Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան երկրների վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության հիմնահարցերը և դրանց լուծման ուղղությամբ առաջարկված տարբերակները՝ բացահայտելով արդիականացման նորովի ընկալումները և կազմակերպման միտումները՝ ներկայացնելով նոր մոտեցումներ և առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նրանով, որ վարչական իրավունքում փորձ է կատարվում համակողմանիորեն ուսումնասիրել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության կատարելագործման հիմնախնդիրները՝ բացահայտելով այդ գործընթացի օրինաչափությունը, նման ուսումնասիրությամբ ձևակերպել և հիմնավորել նորարարական առաջարկություններ՝ դարձնելով հայեցողական լիազորությունների կիրառումն առավել արդյունավետ, ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Արդյունքում, վերլուծության ենթարկելով միջազգային և հայրենական փորձը, կատարվել են ոչ միայն գիտական եզրահանգումներ, այլև ներկայացվել են վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կառուցակարգերի կատարելագործման և զարգացման մի շարք գործուն առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթն ուսումնասիրության արդյունքում բացահայտված և գիտականորեն հիմնավորված լուծումների առաջադրմամբ պայմանավորված՝ ընդհանրացված բնույթի եզրահանգումներն ու առաջարկություններն են, որոնք սահմանվել են ատենախոսության պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսական աշխատանքի մի շարք հատվածներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները: Ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պաշտպանության են ներկայացվել հետևյալ հիմնական դրույթները.

1. աշխատանքում հայեցողական լիազորությունների վերաբերյալ գիտական հայեցակարգերի և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզել, թե օրենսդրությամբ սահմանված հայեցողական լիազորությունները որքանո՞վ են կիրառելի և որո՞նք են դրանց առավելություններն ու թերությունները: Արդյունքում, վարչական մարմնին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների արդյունավետ կիրառումը կարող է նպաստել օրենսդրական կարգավորմանը և իրավակիրառ պրակտիկայի փոխհարաբերակցության ամրապնդմանը, որոնք պայմանավորել ենք հետևյալ գործոններով.

1) իրավական ուղղորդմամբ, երբ պրակտիկան է սահմանում հայեցողական լիազորությունների ձևավորման և զարգացման ընդհանուր ուղղություններն օրենսդրական կարգավորումների համատեքստում.

2) հայեցողական լիազորությունների կիրառումը կոնկրետ իրավիճակներում իրավակիրառ պրակտիկայի զարգացմանը զուգընթաց:

2. Հետազոտելով հայեցողական լիազորությունների իրավական բովանդակությունն ու նշանակությունը, ինչպես նաև վերլուծելով վարչական օրենսդրության դրույթների արդյունքները հանգել ենք նրան, որ վարչական մարմինը օրենքով վերապահված հայեցողական լիազորությունները կիրառում է իրավաչափության սահմաններում՝ հարգելով և պաշտպանելով մարդու իրավունքներն ու ազատությունները, իրավահավասարությունը՝ ապահովելով վարչարարության օբյեկտիվությունը:

Հայեցողական լիազորությունը համարվում է վարչական մարմնին տրված ազատություն՝ իրականացնելու հայեցողական լիազորությունների կիրառմամբ իրավաչափ վարչարարություն, մինչդեռ հայեցողական լիազորությունները սահմանափակելու սկզբունքն իմաստային առումով ենթադրում է հայեցողական լիազորությունների ամբողջական սահմանափակում՝ ստեղծելով «արհեստական զսպվածություն» վարչական մարմնի համար, իսկ ձևական իրավական առումով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունների սահմանափակումը բնորոշվում է որպես վարչական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց կիրառման իրավաբանական անհնարինություն:

3. Անդրադառնալով վարչարարության սկզբունքները բնութագրող՝ միմյանց հետ փոխկապակցված և փոխլրացնող հատկանիշների իրավական բովանդակության կարևորությանը և դրանց փոխգործակցության հիմնախնդիրներին, աշխատանքում հիմնավորվել են վարչական իրավունքի սկզբունքների էության բացահայտման անհրաժեշտությունը և միմյանց հետ հարաբերակցությունը՝ կարևորելով օրենսդրական կարգավորման ու վարչական գործունեության միասնական մոտեցումների մշակման նպատակահարմարությունը: Սկզբունքների գոյությունը վարչական մարմնին հնարավորություն է տալիս իրականացնել իրավաչափ վարչարարություն, նույնիսկ եթե որևէ հստակ իրավական նորմ առկա չէ, որը կկարգավորեր վիճահարույց իրավիճակը: Վարչարարության սկզբունքները մի կողմից արտացոլում են օբյեկտիվ իրականությունը, իսկ մյուս կողմից դրանցից յուրաքանչյուրը գաղափար է, սուբյեկտիվ մոտեցում, որը չափվում է նաև վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի ընդհանուր և մասնագիտական գիտելիքների մակարդակով: Վարչական մարմնի պաշտոնատար անձը,

կարևորելով մարդու իրավունքները և ազատությունները, պետք է առաջնորդվի ոչ միայն այդ պահին կիրառման ենթակա սկզբունքի պահպանմամբ, այլ այդ սկզբունքն առնչակցի մյուս սկզբունքների հետ՝ ցուցաբերելով հետևողականություն ցանկացած սկզբունքի չխախտման հարցում:

4. Կարևորելով հայեցողական լիազորությունների իրավական ու գործառութային նշանակության միջազգային չափորոշիչների գիտագործնական հիմքերի վերլուծությունը, պարզ է դարձել, որ պետական համակարգի ձևավորումից վաղ գոյություն ունեցող հայեցողական լիազորություններն ունեցել են պատմական զարգացման տևական ընթացք, ինչը նպաստել է դրանց հետագա կատարելագործմանը: Հայեցողական լիազորությունների արդիականացման և կիրառման հիմնահարցերը պայմանավորված են իրավաչափ վարչարարության իրականացման հնարավորությամբ, կիրառելիությամբ և մարդու իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությամբ, իսկ հայեցողական լիազորությունները սահմանափակելու սկզբունքի կիրառումը վերահիմաստավորվում է հետևյալ բովանդակային բնութագրիչներով.

1) վարչական մարմնի հայեցողական լիազորությունների ազատ և իրավաչափ ընտրությամբ՝ օրենքի էությանը համահունչ, այդ կերպ ապահովելով մի կողմից դրանց իրավաչափությունը, մյուս կողմից՝ անկաշկանդ, իր ներքին համոզմամբ, առանց քաղաքական ու հասարակական ճնշումների, ազատորեն ընտրել հնարավոր լուծումներից մեկը.

2) հայեցողական լիազորությունների կիրառման նպատակահարմարությամբ՝ նախկինում ընդունված հայեցողական լիազորությունների վերանայման կամ փոփոխման տարբերակով՝ ելնելով պատշաճ վարչարարության և մարդու իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության հնարավորությունից.

3) հիմնավորվածությամբ և պատճառաբանվածությամբ՝ որպես հայեցողական լիազորությունների կիրառման անհրաժեշտ բաղադրիչ, որը երաշխավորում է վարչարարության իրավաչափությունը և վարչական մարմնի գործունեության թափանցիկությունը՝ բացառելով կամայականության որևէ դրսևորում:

5. Վերլուծելով հայեցողական լիազորությունների ոչ պատշաճ կիրառելիության բացասական հետևանքները՝ ատենախոսությունում հիմնավորվել է, որ վարչական մարմնի գործառույթների չարաշահումը հիմք է հասարակության համար ոչ ցանկալի հետևանքների առաջացմանը, քանի որ դրանք խաթարում են մարդու իրավունքներն ու օրինական շահերը: Այդ գործառույթների չարաշահման կանխարգելման հրամայականը ենթադրում է դրա հետևանքով առաջացած հնարավոր կորուստների նվազեցում և կանխարգելման միջոցառումների ձեռնարկում՝ պայմանավորված վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների հնարավոր կիրառմամբ:

Հայեցողական լիազորությունների կիրառումն ունի երկակի նշանակություն. այն ինչպես կարող է խոչընդոտել, այնպես էլ նպաստել կոռուպցիայի դրսևորմանը: Կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների մշակումը և իրականացումը կարող են նպաստել իրավական պրակտիկայի ձևավորմանն ու վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափ ընտրությանը:

6. Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունն ու վարչարարության արդյունավետությունը պայմանավորված են հայեցողական լիազորությունների կիրառմամբ ծագած արտաքին և ներքին արգելքների հաղթահարմամբ:

Արտաքին արգելքները դրանք վարչական մարմնի կամքից անկախ հանգամանքների կամ այլ մարմինների գործողությունների հետևանքով առաջացած խոչընդոտներն են, որոնք վարչական մարմնին զրկում են պատշաճ վարչարարության հնարավորությունից, իսկ ներքին արգելքները դրանք վարչական մարմնի ներսում ծագած այն խոչընդոտներն են, որոնք վարչական մարմնի պաշտոնատար անձից բավարար գիտելիքներ են պահանջում ստեղծված իրավիճակում կողմնորոշվելու համար:

Վարչական գործունեության իրականացման արգելքների առկայությունը հանգեցնում է իրավաչափ վարչարարության խաթարմանը՝ ստեղծելով անբավարար պայմաններ վարչական մարմնի կողմից վարչական ակտի ընդունման համար: Վարչարարության անխոչընդոտ իրականացումը՝ պայմանավորված արտաքին և ներքին արգելքների հաղթահարմամբ, ունի առանցքային և էական նշանակություն իրավաչափ վարչական ակտ ընդունելու համար, իսկ վարչական մարմինը պարտավոր է նախքան այդպիսի ակտ ընդունելը միջոցներ ձեռնարկել այդ արգելքները վերացնելու ուղղությամբ:

7. Ատենախոսությունում ներկայացվել են վարչարարության իրավաչափության հարցում էական նշանակություն ունեցող այնպիսի հատկանիշներ, որոնք նպաստում են արդյունավետ վարչարարության ապահովմանը: Այդ հատկանիշների կիրառումը ստեղծում է բավարար պայմաններ վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունները պատասխանատվությամբ իրականացնելու համար, ինչն էլ հիմք է ոչ միայն հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության, այլև սկզբունքների փոխգործակցության հավասարակշռության ապահովման համար:

Վարչական մարմինների վարչարարության արդյունավետությունը և հայեցողական լիազորությունների իրավաչափությունը պայմանավորում ենք վարչական մարմնի՝

1) ջանասիրությամբ և պատասխանատվությամբ, որոնց համատեղ գործակցությունը բացահայտում է այն հանգամանքները, որոնք արդարացնում և հիմնավորում են նրա կողմից կիրառվող հայեցողությունը.

2) մարդասիրությամբ՝ որպես վարչարարության յուրահատուկ մոտեցում՝ հավասակաշռելով պետական շահերի պաշտպանության նկատմամբ մարդասիրությունը և վարչական մարմնի հետ փոխհարաբերակցվող սուբյեկտի նկատմամբ մարդասիրությունը: Պետական շահերի պաշտպանության և վարչական մարմնի հետ փոխհարաբերակցվող սուբյեկտի նկատմամբ դրսևորվող մարդասիրության ձևերը փոխկապակցված են և հիմք են հայեցողական լիազորությունների կիրառմամբ իրավաչափ վարչական ակտի ընդունման համար՝ հավասարակշռություն սահմանելով դրանց միջև:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունում առաջադրված հիմնահարցերի առնչությամբ կատարված վերլուծությունները կարող են նպաստել վարչական իրավական համակարգում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության ամրագրման և կարգավորման հիմնահարցերի բացահայտմանն ու լուծմանը: Ներկայումս վարչական մարմիններում առկա են օբյեկտիվ նախադրյալներ, այդ թվում՝ իրավական, ֆինանսական, սոցիալական, քաղաքական, որոնք իրենց ամբողջության մեջ թույլ են տալիս խոսել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության նոր մոտեցումների մշակման անհրաժեշտության մասին:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել «ՀՀ սահմանադրական իրավունք», «ՀՀ մունիցիպալ իրավունք», «ՀՀ վարչական իրավունք», դասընթացներում ու հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև բոլոր այն դասընթացների շրջանակում, որոնց հետազոտության առարկան հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունն է:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնում, որտեղ ներկայացվել են զեկույցներ, կազմակերպվել են տարբեր դասախոսական քննարկումներ: Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են գիտական մի շարք հոդվածներում և տարբեր ձևաչափերով կազմակերպված դասախոսական քննարկումների ընթացքում ներկայացված զեկույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Հետազոտությամբ առաջադրված խնդիրների համարժեք լուծման նկատառումներով պայմանավորված՝ ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ ու ամբողջականությամբ ներկայացնելու հետազոտության նյութը: Ըստ այդմ, ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, ատենախոսության տեսական, նորմատիվ ու մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության գիտատեսական ու գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Հայեցողական լիազորությունների բովանդակային հատկանիշները և իրավական հայեցակարգերը»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **««Հայեցողական լիազորություններ» հասկացությունը և գիտական հայեցակարգերը»** վերտառությամբ, հեղինակը, համապատասխան վերլուծության է ենթարկում հայեցողական լիազորությունների կիրառման հիմքերը, ներկայացնում տարբեր հետազոտողների կողմից ներկայացված գիտական մոտեցումներն ու տեսակետները, վերջիններիս կողմից շարադրված ձևակերպումները հայեցողական լիազորությունների վերաբերյալ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հայեցողական լիազորությունների զարգացման հիմնահարցերը միջազգային փորձի ուսումնասիրության համատեքստում. համեմատական-իրավական վերլուծություն»** վերտառությամբ, հեղինակը հանգամանորեն ներկայացնում է հայեցողական լիազորությունների զարգացման միջազգային էվոլյուցիան՝ համեմատական-իրավական վերլուծության ենթարկելով տարբեր երկրների օրենսդրություններում ամրագրված «հայեցողական լիազորություն» հասկացությունը և դրա կիրառման իրավաչափության հենքային նշանակությունը վարչական իրավունքում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Հայեցողական լիազորությունների կիրառելիության սահմանները և առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Հայեցողական լիազորությունների իրավակարգավորման առանձնահատկություններն իրավակիրառ պրակտիկայում»** վերտառությամբ, հեղինակը ներկայացնում է իրավակիրառ պրակտիկայում վարչական մարմնին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների արդյունավետ կիրառումն ապահովող մեխանիզմների կատարելագործումը, որը նպաստում է իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի փոխկապակցվածության ամրապնդմանը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության և վարչարարության հիմնարար սկզբունքների հարաբերակցության հիմնախնդիրները»** վերտառությամբ, հեղինակը, անդրադարձ կատարելով վարչարարության սկզբունքների առանձնահատություններին, համեմատական վերլուծություն է կատարում հայեցողական լիազորությունները սահմանափակելու սկզբունքի և վարչարարության այլ սկզբունքների միջև՝ արտահայտելով դրանց փոխգործակցության կարևորությունը:

Երրորդ ենթագլխում՝ **«Հայեցողական լիազորությունների իրավաչափության պահպանումը՝ որպես վարչական ակտի ընդունման հիմք»** վերտառությամբ, հեղինակը հայեցողական լիազորությունների կիրառումը պայմանավորել է այնպիսի բովանդակային բնութագրիչներով, ինչպիսիք են՝ հայեցողական լիազորությունների ընտրության ազատությունը, նպատակահարմարությունը, հիմնավորվածությունը և պատճառաբանվածությունը, որոնք պետք է ունենան սկզբունքային նշանակություն և հիմք պատշաճ վարչարարության և հայեցողական լիազորությունների կիրառելիության անհրաժեշտության որոշման գործում՝ պահպանելով մարդու իրավունքներն ու օրինական շահերը բոլոր կամայականություններից:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Հայեցողական լիազորությունների կիրառման իրավական կամայականության հետևանքները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ **«Հայեցողական լիազորությունները՝ որպես կոռուպցիոն ռիսկերի առաջացման գործոն»** վերտառությամբ, հեղինակը վերլուծության է ենթարկում կոռուպցիայի դեմ պայքարը, որը դրսևորվում է պետության, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության, կազմակերպությունների և անհատների գործունեությամբ՝ իրենց լիազորությունների սահմաններում: Հեղինակը նշել է նաև, որ կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների մշակմամբ և իրականացմամբ հնարավոր է հասնել դրա նվազեցմանը, քանի որ անհիրատեսական է խոսել դրա ամբողջական վերացման մասին: Կոռուպցիայի նվազեցումը հնարավոր է իրականացնել՝ հայեցողական լիազորությունների շրջանակի հնարավորինս նեղացմամբ հսկողության ու վերահսկողության ինստիտուտների կատարելագործմամբ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Վարչական գործունեության սահմանափակման հիմնահարցերը և լուծման ուղիները»** վերտառությամբ, հեղինակն, ընդգծել է վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման ընթացքում առաջացած արգելքների հաղթահարման կարևոր նշանակությունը՝ ոչ միայն վարչական մարմնի, այլև մարդու իրավունքների և ազատությունների պահպանման համար, որոնք կարգավորում և

պաշտպանում են հասարակական կյանքի հիմնական ոլորտներն ու ապահովում օրինականությունը:

Երրորդ ենթագլխում՝ **«Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման իրավական հետևանքները և նվազեցման միջոցները»** վերտառությամբ, հեղինակն անդրադարձել է հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների հնարավոր վերացման միջոցներից յուրաքանչյուրին, որոնք կարող են նպաստել հայեցողական լիազորությունների կիրառման ուժեղացմանը և որոշումների ընդունման գործընթացում իրավաչափության, թափանցիկության, հաշվետվողականության և ամբողջականության վրա հիմնված համակարգի ապահովմանը:

Եզրակացության մեջ ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. ընդհանրացնելով պատմական տարբեր ժամանակաշրջաններում ձևավորված գիտական հայեցակարգերը և տեսությունները՝ հանգեցինք այն հետևության, որ հայեցողական լիազորությունները գոյություն են ունեցել վաղնջական ժամանակներից, երբ գոյություն չեն ունեցել պետությունները, հետևաբար նշվածը վկայում է, որ հայեցողական լիազորություններն ավելի վաղ են ծագել, քան պետությունը՝ չնայած որ հայեցողական լիազորությունների ձևավորման և զարգացման գործընթացն ուղղակիորեն պայմանավորված է հանրային հարաբերությունների հետ, որոնք էլ իրենց հերթին անխզելիորեն կապված են պետության և հանրային իշխանության գործունեությամբ:

2. Իրավաբան գիտնականների համեմատական վերլուծությունների ընդհանրացմամբ կատարել ենք «հայեցողական լիազորություններ» հասկացության մի շարք այլ հասկացությունների միջև համեմատական վելուծություններ՝ գալով այն եզրահանգման, որ իրավունքի տեսության մեջ ընդհանուր առմամբ առկա է միասնական ըմբռնում հայեցողության էության՝ որպես ընդհանուր իրավական երևույթի մասին, ինչը նպատակ է հետապնդում ապահովել օրենսդրությամբ սահմանված ամբողջական կամ հարաբերական անորոշության իրավիճակում վարչական մարմնի կողմից մի շարք օրինական այլընտրանքներից ընտրել այն հնարավոր լուծումը, որը հնարավորություն կընձեռնի առավել արդյունավետ և արդարացիորեն իրականացնել օրենսդրի մտադրությունը: Վերոգրյալի հիման վրա՝ ձևակերպել ենք հայեցողական լիազորության սահմանման մեր տարբերակը. «Հայեցողական լիազորություններն օրենքով վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձին իր իրավասության շրջանակում վերապահված իրավունքն է՝ ընդունել վարչական ակտ մեկից ավելի իրավաչափ ազատ լուծումներից մեկն ընտրելու հնարավորությամբ»:

3. Իրավական և ժողովրդավար պետությունում, որտեղ յուրաքանչյուր անձ իր խախտված իրավունքների վերականգնման համար, որոնք ծագել են վարչական մարմինների կամայական որոշումներից (այդ թվում՝ հայեցողական վարչական ակտի դեպքում) իրավունք ունի գործադրել հնարավոր ջանքեր դրանց վերացման նպատակով: Նման իրավիճակից խուսափելու համար վարչական մարմինը պարտավոր է հետևողական լինել իրեն վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության հարցում:

Ըստ այդմ, հայեցողական լիազորությունների կիրառմամբ վարչական ակտերի ընդունման անհրաժեշտությունը կարող է ծագել՝

1) երբ օրենսդիրը նախատեսել է «կամ» շաղկապի օգտագործմամբ այլընտրանքային տարբերակներ՝ վարչական մարմնին վերապահելով դրանցից մեկի վերաբերյալ վարչական ակտ ընդունելու հայեցողական լիազորությունը՝ հիմքում դնելով օրենսդրի հետապնդած նպատակը.

2) երբ օրենսդիրն օգտագործում է «հնարավոր է», «կարող է» և այլ նմանատիպ բառեր, ինչպես նաև անորոշ հասկացություններ, որոնց գնահատումը տրված է վարչական մարմնին, այդ կերպ՝ վերապահելով հայեցողական լիազորությունների կիրառման հնարավորություն:

4. Վարչական մարմիններին տրամադրված լայն հայեցողական լիազորությունները մեծացնում են հավանականությունն իրավասու պաշտոնատար անձանց կողմից նման լիազորությունների օգտագործումն ի շահ իրենց, որը չի ենթադրում բացառապես նյութական շահ, այլ՝ իր համար ցանկալի անձի օգտին որևէ գործողություն (անգործություն) կատարել: Այսինքն, վարչական մարմնին վերապահված լայն հայեցողական լիազորություններն իրականում կարող են հիմք հանդիսանալ կոռուպցիայի զարգացման համար: Մեր դիտարկմամբ, կոռուպցիայի առաջացման հնարավոր պատճառները բացառելու համար հայեցողական լիազորությունների կիրառմամբ վարչական ակտի ընդունումը պայմանավորում ենք հետևյալ նախադրյալներով.

1) վարչական ակտը չպետք է նախատեսի անձանց և կազմակերպությունների համար ընդհանուր ընթացակարգից բացառություններ սահմանելու հնարավորություն՝ կախված վարչական մարմնի հայեցողությունից, քանի որ մեծանում է հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հավանականությունը.

2) վարչական ակտում չպետք է լինեն ակնհայտ գնահատողական բնույթի հասկացություններ, իրավական տեխնիկայի կանոնների խախտումներ, որոնք կարող են վկայել կամայական դրսևորման կամ կոռուպցիոն գործոնների հնարավոր առկայության մասին.

3) վարչական ակտում չպետք է ընդգրկել օրենքի կիրարկումն ապահովող այնպիսի ենթաօրենսդրական ակտեր, որոնց միջոցով վարքագծի ընդհանուր պարտադիր կանոնների սահմանումը կարող է խախտել անձանց և կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերը, եթե այդ ակտը կարգավորում է օրենքի առարկա հանդիսացող հարցեր՝ թույլ տալով նորմի բացակայությունը լրացնել վարչական մարմնի հայեցողությամբ.

4) վարչական ակտը պետք է լինի հրապարակային՝ մեծացնելով վարչական մարմինների տեղեկատվության հրապարակայնությունը՝ բացառությամբ գաղտնիք պարունակող և անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվության: Վարչական մարմնի կողմից ընդունված յուրաքանչյուր վարչական ակտ ենթակա է հրապարակման՝ ապահովելով դրա հասանելությունը հանրության համար, որը կարելի է իրականացնել վարչական մարմնի էլեկտրոնային պաշտոնական կայքէջի միջոցով:

5. Վերլուծելով «արգելք» և «սահմանափակում» եզրույթները՝ եկել ենք այն եզրահանգման, որ արգելքի միջոցով պետությունը մի դեպքում պաշտպանում է հասարակության և քաղաքացիների համար ամենակարևոր արժեքները, իսկ մյուս դեպքում՝ այն կիրառում է որպես սահմանափակող միջոց նույն հասարակության և քաղաքացիների նկատմամբ:

Արգելքը պետության համար վարքագծի օրինական միջոց է, որն իր մեջ ներառում է նաև սահմանափակումը: Մինչդեռ սահմանափակումն ընդամենն արգելքի տարրեր է պարունակում՝ ապահովելով վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացումը, ուստի օրենսդիրը սահմանել է «հայեցողական լիազորությունները սահմանափակելու» և ոչ թե «հայեցողական լիազորությունները արգելելու» ձևակերպումը:

Վարչական մարմնի առջև ծագած արգելքները՝ որպես հասարակական հարաբերությունները կարգավորող գործիքներ, նպատակ ունեն զսպել այն գործողությունները, որոնք կարող են վտանգել ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական իրավունքներն ու շահերը: Վարչական գործունեության արգելքների միջոցով ուրվագծվում է անընդունելի վարչական գործողությունների շրջանակը, որոշվում են ինչպես մարդու, այնպես էլ վարչական մարմնի իրավաչափ վարքագիծը: Այսինքն, վարչաիրավական հարաբերություններում արգելքները ծագում են վարչական մարմինների պաշտոնատար անձանց և սուբյեկտների միջև վարչական գործառույթներ իրականացնելու և հանրային շահերը կարգավորելու համար:

6. Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները խնդիրներ են ստեղծում վարչական մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց վերապահված գործառույթների ու իրավասության ներդաշնակեցման, հայեցողության սահմանների հստակեցման, ինչպես նաև սահմանափակման իրական նախադրյալների ստեղծման հարցում՝ առաջացնելով սուբյեկտիվիզմի ու կամայականության դրսևորումներ:

Վերը նշված խնդիրների առաջացումը և ընդհանրապես հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները բացասական ազդեցություն կարող են ունենալ.

1) մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բարձր առաքելության վրա, քանի որ վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների իրավաչափ սահմանները որոշելիս պետք է հարգել մարդու իրավունքները և պաշտպանել դրանք՝ չմիջամտելով և չխոչընդոտելով այդ իրավունքների իրականացմանը, քանզի մարդու իրավունքները հարգելը վարչական մարմնի պարտականությունն է՝ հաշվի առնելով միջազգային պայմանագրերի և ազգային օրենքների պահպանման կարևորությունը.

2) պետության առաջնահերթ ոլորտների՝ վարչարարության մասնագիտացված գործունեության սոցիալական և տնտեսական քաղաքականության ձևավորման վրա, քանի որ պետության տնտեսական բարեկեցությունը կախված է նաև վարչական գործառույթների անխափան իրականացման հետ՝ դրանով իսկ ապահովելով վարչարարության արդյունավետությունը: Վարչարարության զարգացումը նպաստում է սոցիալական բարեկեցության բարելավմանը, քանի որ սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր հարցերը վերապահված են վարչարարություն իրականացնող մարմիններին, հետևաբար այս ոլորտում առավել հաճախ են կիրառելի դառնում հայեցողական լիազորությունները.

3) ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վարչական մարմնի նկատմամբ ձևավորված վստահության վրա, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձանց մոտ վստահության պակաս ի հայտ է գալիս հատկապես վարչական մարմնի կողմից իրեն վերապահված հայեցողական լիազորությունների

կիրառման իրավաչափության խախտման հետևանքով, քանզի նույն վարչական մարմնում օրենքի կիրարկումը կարող է դրսևորվել տարբեր կերպ՝ ելնելով վարչական ակտ ընդունելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձի սոցիալական ծագումից և աշխատանքի կազմակերպման մեջ նրա դերից: Յուրաքանչյուրը պետք է իրավաչափ վստահություն ունենա վարչական մարմինների նկատմամբ, որպեսզի իր վարքագիծը կարգավորի այն համոզմամբ, որ իրեն հուզող խնդիրը կլուծվի վարչական մարմնի պատշաճ գործունեության արդյունքում.

4) վերադաս վարչական մարմնի և դատական համակարգի վրա՝ ստեղծելով դրանց համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտումները հանգեցնում են վարչական ակտերի բողոքարկման ծավալի աճին, քանզի անձը կամ կազմակերպությունն իրեն վերաբերելի հայեցողական լիազորությունների կիրառմամբ ընդունված վարչական ակտերում իրավաչափության խախտման հետևանքների վերացման, ինչպես նաև իրավունքի վերականգնման նպատակով դիմում է վերադաս վարչական մարմին, այնուհետև մերժման պատասխան ստանալով հայց է ներկայացնում դատարան: Այսինքն, վարչական մարմինը հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման արդյունքում լրացուցիչ բեռ է ստեղծում վերադաս վարչական մարմնի և դատարանի համար:

7. Վարչական մարմինները պարտավոր են իրենց հայեցողական լիազորությունները կիրառել օրենքի սահմաններում և ընդունել անկախ ու արհեստավարժ վարչական ակտեր՝ սահմանափակվելով իրենց առջև դրված առաջադրանքով և հրաժարվելով ցանկացած կողմնակի միջամտությունից: Նշվածի ապահովման և հայեցողական լիազորությունների կիրառմամբ ընդունվող վարչական ակտերի իրավաչափության խախտման հետևանքների կանխարգելումը պայմանավորում ենք հետևյալ հանգամանքներով.

1) վարչական ակտի ընդունման համար օրենսդրական պահանջների ապահովումը և բավարար փաստական հանգամանքների առկայությունը, վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված հայեցողության սահմանների պահպանումը՝ բավարար պայմաններ են ստեղծում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափ վարչարարության իրականացման համար.

2) վարչական ակտով իրավական և փաստական հանգամանքների հիմնավորումը, քանի որ միայն հիմնավորված և պատճառաբանված վարչական ակտը կարող է վկայել վարչական մարմնի իրավաչափ վարչարարության մասին.

3) վարչական մարմնի կողմից վարչարարության սկզբունքների պահպանումը՝ համապատասխանեցնելով իրավական հետևանքը հայեցողական լիազորությունների նպատակին, քանի որ վարչարարության սկզբունքներից ցանկացածի խախտումն ամբողջությամբ խաթարում է վարչական ակտի էությունը:

Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները կարող են լրջորեն վտանգել վարչական մարմնի գործունեությունը և կասկածի տակ առնել արդեն իսկ ընդունված վարչական ակտերի օբյեկտիվությունը՝ ձևավորելով անվստահության մթնոլորտ: Թվարկված հանգամանքներն ուղղակիորեն փոխկապակցված են վարչական մարմինների անաչառ գործելու հետ, առանց որոնց անհնար է հայեցողական լիազորությունների կիրառմամբ իրականացնել նաև անձանց և

պետության սահմանադրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունը՝ բացառելով վարչական մարմնի կողմից կամայական մոտեցման որևէ դրսևորում:

8. Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների նվազեցման հնարավոր միջոցներից յուրաքանչյուրը կարող է նպաստել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությանը և որոշումների ընդունման գործընթացում իրավաչափության, թափանցիկության, հաշվետվողականության և ամբողջականության վրա հիմնված համակարգի ապահովմանը: Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության և դրանց խախտման հետևանքների նվազեցման հնարավոր միջոցներն են՝

1) հայեցողական լիազորությունների հայեցակարգի ընդունումը՝ որպես վարչական ակտի կատարման նեգատիվ հետևանքների բացառման խթանիչ, քանի որ վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի վերջնական արդյունքը վարչական ակտի ընդունումն է և դժվար է հավասարակշռություն պահպանել վարչական մարմնին տրված ազատության և դրա սահմանափակման միջև, իսկ վարչական մարմնին վերապահված է իր առջև ծագած խնդիրների լուծման ազատությունը: Միևնույն ժամանակ, այդ ազատության ոչ պատշաճ կիրառելիությունը հանգեցնում է անհատի հիմնարար իրավունքների ոտնահարմանը: Նշված հավասարակշռության հարցի լուծումը հայեցակարգի մշակումն է: Հայեցակարգի մշակման արդյունքում հնարավոր կլինի հասկանալ ներպետական օրենսդրության խնդիրները, դրանց լուծման համար ուսումնասիրել միջազգային փորձը, հանդես գալ օրենսդրական բարեփոխումների կատարման նախաձեռնությամբ: Հայեցակարգի գոյությունը կվկայի նաև վարչական մարմնի գործունեության, ինչպես նաև վարչարարության թափանցիկության, պատճառաբանվածության և հիմնավորվածության մասին՝ մշակելով նոր հայեցակարգ, որը կհամապատասխանի ժամանակակից պետության զարգացմանը՝ բավարարելով հասարակության և պետության կարիքները: Հայեցակարգի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է այնպիսի կառուցվածքային տարրերի գոյությամբ, որոնք գնահատողական կատեգորիաներ կամ վերացական բնույթի հասկացություններ են և պահանջում են գործունեության իրականացման կարգ ու մեկնաբանում.

2) էլեկտրոնային ուղեցույցների մշակումը՝ հիմքում դնելով յուրաքանչյուր վարչական մարմնին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը և դրա խախտման բացասական հետևանքները, քանի որ դրա նպատակը վարչական մարմիններին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման և դրանց բացասական հետևանքների վերացման համար աշխատակիցների ու նրանց վերադաս մարմինների փոխգործակցության կարգի հիմունքների պարզաբանումն է: Հայեցողական լիազորությունների կիրառման էլեկտրոնային ուղեցույցի մշակումը կնպաստի վարչական մարմինների աշխատակիցների աշխատանքային գործունեության բարելավմանը՝ ուղղորդելով հայեցողական լիազորությունների պատշաճ իրականացմանը: Նշված ուղեցույցով կարող են պարզաբանվել վարչական մարմնի ստորադաս և վերադաս աշխատակիցների փոխգործակցության կարգը՝ հայեցողական լիազորությունների կիրառման հարցում՝ ստեղծելով փոխշահավետ համագործակցություն, ինչպես նաև բացառելով հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների հնարավոր առաջացումը.

3) վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի վերապատրաստման ինստիտուտի կատարելագործումը՝ ելնելով միջազգային լավագույն փորձից: Վերապատրաստում անցկացնելու անհրաժեշտությունը վարչական մարմինների արդյունավետության կարևոր բաղադրիչն է, քանզի առանցքային նշանակություն ունեն վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի խորը մասնագիտական գիտելիքները: Իրավիճակի ճիշտ գնահատումն ու վերլուծությունն է նպաստում պատշաճ վարչական ակտի ընդունմանը, քանի որ պատշաճ վարչարարության և դրան ուղղված պահանջների պահպանմամբ ընդունված վարչական ակտի դեպքում է հնարավոր հասնել վարչական մարմնի, այդ թվում՝ պետության, ցանկալի նպատակին: Վերապատրաստման անցկացման արդյունավետության ապահովման առաջնային հարցը վերաբերում է թեմաների մշակմանը և վերապատրաստողների մասնագիտական գիտելիքներին:

«Հայեցողական լիազորություններ» թեմայի և դրան հարակից թեմաների քննարկումը ենթադրում է տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև այնպիսի խնդիրների քննարկում, որոնք գործնականում լուրջ խոչընդոտներ են առաջացնում վարչական մարմնի համար՝ նպաստելով վերապատրաստման գործնական նշանակության արդյունավետության բարձրացմանը:

Վերոնշյալից ելնելով՝ օրենսդիր ու դատական համակարգերի միջև փոխհարաբերություններն ամրապնդելու, տեղեկատվության փոխանցումն առավել արդյունավետ դարձնելու համար, նաև հիմնվելով ֆրանսիական փորձի վրա, ներկայացրել ենք օրենսդրական կարգավորմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորներին ներգրավել վերապատրաստման գործընթացին: Նշվածը կխթանի երկու համակարգերի համատեղ փոխգործակցությունը՝ ի նպաստ պետության, հանձինս վարչական մարմինների: Միաժամանակ, դատավորների ներգրավածությունն իրենից ներկայացնում է փորձի փոխանակում, քանի որ վերջիններս դատական պրակտիկայում ձեռքբերված հայեցողական լիազորությունների վերաբերյալ փորձը կարող են փոխանցել վարչական մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց: Ավելին, վարչական մարմինները վերապատրաստումների միջոցով կարող են ձևավորել մեկ միասնական մոտեցում թե վարչական մարմնի, թե դատարանի համար՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում գործերի քանակի կրճատմանը: Միևնույն ժամանակ, վերապատրաստվողները Հայաստանի Հանրապետության վարչական դատավորների հետ կարող են քննարկել և հնարավոր լուծումներ փնտրել այնպիսի խնդրահարույց հարցերի վերաբերյալ, որոնց հետագայում հնարավոր է հանդիպել պրակտիկայում, իսկ դատավոր գիտնականների համար հնարավորություն կստեղծվի գիտական մոտեցում ցուցաբերել առաջադրված հարցերին: Բացի այդ, վերապատրաստման ժամանակ կարող են քննարկվել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության նոր մոտեցումներ, որոնք կարող են առաջացնել օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտություն:

Ուսումնասիրելով «հայեցողական լիազորություններ» հասկացության առավել հատկանշական և ինքնուրույն բաղադրատարրերը՝ փորձել ենք այդ ճանապարհով գնահատել հայեցողական լիազորությունները՝ որպես վարչական մարմինների պարտադիր ուղենիշ, կարևորելով վարչական իրավունքում վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման արդյունավետությունը, որը բխում է պրակտիկայում ձեռքբերված գիտելիքների ուժից և գործի հանգամանքների իրավական գնահատումից,

հակասությունների հաղթահարումից, հայեցողական լիազորությունների մեկնաբանումից և հստակեցումից:

Այսպիսով, հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության գիտական և իրավական արդիական խնդիրների լուծման ճանապարհով փորձեցինք համակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ներկայացնել առաջադեմ ուղիներ, որոնք կարող են նպաստել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների նվազեցմանը և վարչական ակտերի օբյեկտիվության ապահովմանը՝ ձևավորելով վստահության մթնոլորտ, անձանց և պետության սահմանադրական իրավունքների արդյունավետ պաշտպանություն՝ բացառելով վարչական մարմնի կողմից կամայական մոտեցման որևէ դրսևորում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. **Հովսեփյան Ա.,** «Հայեցողական լիազորությունների օրենսդրական հիմքերը և կիրառման հիմնահարցերը վարչաիրավական հարաբերություններում», Մենագրություն, «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, Երևան, 2025, 170 էջ:
2. **Հովսեփյան Ա.,** «Հայեցողական լիազորությունների հասկացությունը և հայցակարգային մոտեցումները», Եվրոպական համալսարան գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2024, թիվ 15(02), էջ 176-186:
3. **Հովսեփյան Ա.,** «Հայեցողական լիազորությունների սահմանափակման և վարչարարության սկզբունքների հարաբերակցության հիմնախնդիրները», «ՀՀ Սահմանադրական դատարան. տեղեկագիր» պարբերական, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2024, թիվ 4(116), էջ 68-87:
4. **Հովսեփյան Ա.,** «Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները և դրանց վերացման ուղիները», «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, Երևան, 2025, թիվ 19, էջ 48-60:
5. **Հովսեփյան Ա.,** «Հայեցողական լիազորությունների իրավակարգավորման առանձնահատկություններն իրավակիրառ պրակտիկայում», Եվրոպական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2025, թիվ 16 (01), էջ 93-102:
6. **Հովսեփյան Ա.,** «Հայեցողական լիազորությունը՝ որպես կոռուպցիոն ռիսկերի առաջացման գործոն», Եվրոպական համալսարան գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2025, թիվ 16 (03), էջ 73-82:

ОВСЕПЯН АРМИНЕ АРКАДЯЕВНА

ЗАКОННОСТЬ ОСУЩЕСТВЛЕНИЯ ДИСКРЕЦИОННЫХ ПОЛНОМОЧИЙ В АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВЫХ ОТНОШЕНИЯХ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право. Защита состоится 12-ого февраля 2026 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Емина 123)

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертации обусловлена тем, что для государства и общества важную роль играет правомерность использования дискреционных полномочий, главная цель которых – дать возможность административному органу посредством использования дискреционных полномочий разрешить вопрос, не урегулированный или частично урегулированный законодательством, обеспечив соблюдение и защиту конституционных прав человека.

Научная новизна диссертации заключается в том, что предпринята попытка в административном праве комплексно исследовать вопросы повышения законности использования дискреционных полномочий, выявить закономерности этого процесса и на основе такого исследования сформулировать и обосновать инновационные предложения, повышающие эффективность использования дискреционных полномочий как в теоретическом, так и в практическом плане.

Целью диссертации является выявление решения проблем реализации дискреционных полномочий административными органами, обусловливание их правомерности применения, определение их границ и разграничения, выявление проблем, существующих в нормативных правовых актах и правоприменительной практике, обоснование необходимости разработки концепций, процедур и электронных руководств, ориентирующих административные органы на реализацию дискреционных полномочий.

Легитимность осуществления дискреционных полномочий направлена на разрешение существующих недоразумений внутри административного органа, а также социально-экономических проблем общества, обеспечение прав и законных интересов человека.

При осуществлении дискреционных полномочий административный орган действует в соответствии с целью, преследуемой законодателем, используя предоставленную ему возможную свободу.

У административных органов порой имеются объективные предпосылки, в том числе правовые, финансовые, социальные, политические, которые в совокупности позволяют говорить о необходимости разработки новых подходов к легитимности осуществления дискреционных полномочий.

Объектом диссертационного исследования стали научно-концептуальные подходы и процедуры законности использования дискреционных полномочий в административном праве, использование дискреционных полномочий административными органами в контексте изучения международного опыта, взаимосвязь между ограничением дискреционных полномочий и основополагающими принципами права, разработка путей устранения последствий нарушения законности использования дискреционных полномочий.

Предметом исследования являются основные проблемы в контексте законности использования дискреционных полномочий в административном праве и их правовой анализ, а также адекватные решения и научно обоснованные предложения, направленные на модернизацию использования дискреционных полномочий.

Правовые основы легитимности осуществления дискреционных полномочий в административном праве всегда находились в центре внимания как зарубежных, так и отечественных теоретиков и политологов. Многочисленные исследования и предложения действительно создали правовую основу для осуществления и продления дискреционных полномочий в различных странах.

Администрирование, осуществляемое в административном органе, имеет важное самостоятельное значение для системы административного права, поскольку его целесообразность обусловлена защитой прав человека.

Различные международные организации высказали свое мнение о важности легитимности осуществления дискреционных полномочий, основываясь на защите прав человека.

Целью диссертации было обобщение общетеоретических положений юридической науки, международного и отечественного опыта, а также выявление проблем и путей их решения на основе существующей практики деятельности административных органов, что позволит повысить уровень администрирования в административном органе.

Исходя из целей исследования, автором сформулированы интерпретации и необходимые выводы, вытекающие из логического хода исследования.

Основные результаты исследования нашли отражение в монографии и научных статьях.

Следует отметить, что все выводы диссертации построены на чётком изучении источников и методологических основ.

ARMINE A. OVSEPYAN

LEGALITY OF THE EXERCISING OF DISCRETIONARY POWERS IN ADMINISTRATIVE-LEGAL RELATIONS

Competition for the degree of Candidate of Legal Sciences is the speciality of 12.00.02 - Public Law. The defence of the dissertation is scheduled for 12 February 2026 at 16:00 in a panel session of the Professional council 063 of Jurisprudence of Russian-Armenian University of the RA Higher Eduction and Science Committee (123, H. Emin, Yerevan, 0051)

SUMMARY

The relevance of the dissertation topic is due to the fact that the legality of the use of discretionary powers plays an important role for the state and society, the main purpose of which is to enable an administrative body, through the use of discretionary powers, to resolve an issue not regulated or partially regulated by legislation, ensuring the observance and protection of constitutional human rights.

The scientific novelty of the dissertation lies in the fact that an attempt has been made to comprehensively study the issues of increasing the legality of the use of discretionary powers in administrative law, to identify the patterns of this process and, on the basis of such research, to formulate and substantiate innovative proposals that increase the effectiveness of the use of discretionary powers in both theoretical and practical terms.

The aim of the dissertation is to identify solutions to the problems of implementing discretionary powers by administrative bodies, determining their legality of application, defining their boundaries and delimitation, identifying problems that exist in regulatory legal acts and law enforcement practice, substantiating the need to develop concepts, procedures and electronic guidelines that guide administrative bodies in the implementation of discretionary powers.

The legitimacy of the exercise of discretionary powers is aimed at resolving existing misunderstandings within the administrative body, as well as the socio-economic problems of society, and ensuring the rights and legitimate interests of the individual.

In exercising discretionary powers, the administrative body acts in accordance with the objective pursued by the legislator, using the possible freedom granted to it.

Administrative bodies sometimes have objective preconditions, including legal, financial, social, and political ones, which together suggest the need to develop new approaches to the legitimacy of the exercise of discretionary powers.

The object of the dissertation research was the scientific conceptual approaches and procedures of the legality of the use of discretionary powers in administrative law, the discretionary powers used by administrative bodies in the context of studying international experience, the correlation between the limitation of discretionary powers and the fundamental principles of law, the development of ways to eliminate the consequences of violating the legality of the use of discretionary powers.

The subject of the research is the main problems in the context of the legality of the use of discretionary powers in administrative law and their legal analysis, as well as adequate solutions and scientifically substantiated proposals aimed at modernizing the use of discretionary powers.

The legal basis for the legitimacy of the exercise of discretionary powers in administrative law has always been a focus of attention for both foreign and domestic theorists and political scientists. Numerous studies and proposals have indeed created a legal basis for the exercise and extension of discretionary powers in various countries.

Administration carried out in an administrative body has an important independent significance for the system of administrative law, since its appropriateness is determined by the protection of human rights.

By solving current scientific and legal problems of the legality of the exercise of discretionary powers, we attempted to present, as a result of comprehensive studies and analyses, progressive ways that can contribute to reducing the consequences of violating the legality of the exercise of discretionary powers and ensuring the objectivity of administrative acts, creating an atmosphere of trust, effective protection of the constitutional rights of individuals and the state, excluding any manifestation of an arbitrary approach by the administrative body.